եղբայր մաւր կեսառոսաց Հայոց և Վրաց և ամենայն Ափխազաց. բարեպաշտիցն և Ավ. զաւրացելոցն մեծին Զաքարիայի և Իւանէի». 297ա.։ Նորան էր յանձնուած Շահնշահ մեծի եւ ապա սորա որդի Զաքարիայի կրթութիւնը, լինելով Զաքարիայի տան «մանկուր թանկուցէս, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող եւ հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»։

Աւետարանը նուիրուած էր ոչ միայն Խաւռասի որդի Սասնայի, այլ և սորա մօր՝ Խութլու խաթունի յիշատակին, որ «(յազ) գէ գո(լով) պարսիկ», քրիստոնէութիւն էր ընդունած և որդու մահուանից երկու տարի յետոյ ինքն էլ վախճանուել էր և թաղուել «ի տապանի անդրանկին իւրոյ», որ Բագնայրի վանքն էր (¹)։ Ապա Խաւռասը իւր երկրորդ կնոջ Զմրուխտ խաթունի հետ, «որ և սա ազգաւ տաճիկ գոլով յազնուական և փառաւորազոյն յազգէ ի մեծ նախարարացն Պարսից», նոյնպէս քրիստոնէութիւն ընդունած, գրել է տալիս «զսուրբ աւետարանս ի յիշատակ անդրանկի իմոյ Սասնային եւ մաւր նորին Խութլու խաթունին եւ ինձ բազմամեղիս եւ ամուսնոյ իմոյ Զմրուխտ խաթունին եւ սիրելի դստրեկի իմոյ Թայիկ թագուհւոյ, ամուսնոյ անդրանկի իմոյ որ է զարմ եւ շառաւեղ թագաւորացն Հայոց և վասն յերկար կենդանութեան սիրելի որդւոյ իմոյ Վասակայ», և նուիրում է Բագնայրի վանքին, «ի տէրութեան տեղւոյն տեառն Գրիգորոյ, որ մագիստրոսն ասի, վերագիտողի աթոռոյս Անւոյ եւ յառաջնորդութեան հաւր Սիմեոնի» (¹)։

Բագնայրի արձանագրութիւններից մէկը գրուած է հէնց Սասնայի մօր Խութլու խաթունի կողմից ՈՀԸ կամ ՈՀԲ թուականին, հաւանօրէն առաջինը, որից յետոյ ՈՁԱ թուին գրուել է այս շքեղ և փառաւոր աւետարանը որդու և մօր յիշատակին (դժուար թէ ՈՀԲ թուականից՝ այդքան երկար՝ սպասէր Խաւռաս իւր հանգուցեալների յիշատակը անմահացնելու համար)։ Արձանագրութիւնը փոքր ինչ փչացած է, բայց երևում է, որ նա կալուածներ է նուիրել Բագնայրի սուրբ ուխտին՝ «յազգս յիշատակաց մերոց եւ անդրանկին մերո Սասնային, որ կիսաւրեա փոխեց(աւ) եւ սուգ մեծ եթող ծնողաց իւրոց». հայր Սիմէոն իւր միաբանների հետ յատկացնում է քառասուն օր պատարագել, քսան խաթունին, տաս Խաւռասին և տաս Սասնային(²)։

Արձանագրութիւնների մէջ ունինք տեղեկութիւն և հանգուցեալ Սասնայի կնոջ Թայիկի մասին. նա Ապիրատի որդու Շարափշահի աղջիկն էր. ծնողներն առանձին առանձին և ինքը նուիրաբերութիւններ ունին Բագնայրի վանքին հայր Սիմէոնի, իսկ Թայիկն ինքը հայր Սիմէոնի և ապա նորա յաջորդ Աբրահամի օրով(³). մի տեղ նա անուանուում է իրեն «Թաիկ թագուհի դուստր Շարափշահի», միւսում

(¹) Նոյն վանքի արձանագրութիւնների մէջ խօսք կայ եւ ուրիշ ծեռագիրների նուիրաբերութեան մասին. 1262 թուին Գարեգոյն երէց որդի Մանգիկ երիցու եւ ամուսինը Մարիամ կալուածական պարգեւների հետ տալիս են եւ «մի տաւնական մագաղաթ, մի աւետարան ոսկետուփ» (Ալիշան, Շիրակ 119)։ Բայց աւելի կարեւոր է հետեւեալ տեղեկութիւնը, որ Ցոհան արեղան գրում է ՉԾԴ (=1305) թուին գրած յիշատակարանի մէջ. «Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ տառս աստուածաշունչ բարձրաբարոզ սուրբ մարգարէիս Եսայեա, ... ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ որ կոչի Բագնայրեցի, զոր սուրբ վարդապետին Ցովսեփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (Ձեռ. Էջմ. 980 նց)։ Ո՞վ է այս Ցովսէփ վարդապետը, հաստատ ասել չենք կարող, բայց կարծում ենք Վանականի աշակերտներից մէկը՝ Վարդանի, Կիրակոսի եւ Առաքելի աշակերտակիցը ըստ Մաղաքիայի (Ս. Պետերբուրգ, 1870. եր. 12) կամ ըստ Օրբէլեանի ժամանակագրութեան (Ձեռ. Երեւանի թանգ.) Աղջոց վանքում 1279 թ. վախճանած նոյնանուն վարդապետը. «ՁԻԸ կատարի մեծ վարդապետն Ցովսէփ ի վանսն Ախչոց». Տես եւ Գանձակեցի Ղուկ. հրատ. եր 296, 313, 315։

(¹) Այս յիշատակարանի մի մասը բուն ծեռագրից պոկուած էր եւ պահպանակ դարձած N 153/177 Աստուածաշնչի, իսկ մի մասն էլ, ուր թուականն է, N 1259/1134 ծեռագրի. առաջինը գտել եւ կցել է ծեռագրին հանգուցեալ Սահակ վարդապետ Ամատունին, իսկ երկրորդը մենք։

(²) Հ. Ներսէս Սարգսեան, Տեղագր. ի Փոքր եւ ի Մեծ Հայս. Վենետիկ. 1864, 179։ Ալիշան. Շիրակ. 116։

(³) Սարգսեան, Տեղագր. 185. 186. 187։ Ալիշան. Շիրակ. 118. 119։